# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի հունիսի 4 - ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի $10^{բ}$ դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Շ. Հարությունյանը :

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում:

2. Տարեկան արդյունքների ամփոփում:

3. Ընթացիկ հարցեր /Էքսկուրսիայի կազմակերպում/:

1.Լսեցին.

Ելույթ ունեցավ դասղեկ Շ. Հարությունյանը՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում աշակերտների ցուցաբերած արդյունքները: Նա նշեց, որ երկրորդ կիսամյակում աշակերտների առաջադիմության ցուցանիշները համեմատած ավելի ցածր են,քան առաջին կիսամյակում: Անբավարար գնահատական ունեցող աշակերտներ չկան:Դասղեկը ընդգծեց, որ աշակերտները այդպես էլ չկարողացան հաղթահարել <<Հանրահաշիվ>> և <<Երկրաչափություն>> առարկաների բարդությունը, սակայն հույս հայտնեց, որ առավել շատ աշխատելու դեպքում այդ խնդիրն էլ կհաղթահարվի աշակերտների կողմից: Շ. Հարությունյանը հորդորեց ծնողներին առավել ուշադիր լինել աշակերտների առաջադիմության հարցում:

Որոշեցին.

Ծնողները որոշեցին առավել մեծ ուշադրություն դարձնել , որ աշակերտները դասերին լինեն միշտ պատրաստ և ակտիվ:

2.Լսեցին.

Դասղեկ Շ. Հարությունյանը ամփոփելով տարեկան արդյունքները՝նշեց,որ 2017-2018 ուստարում $10^{բ}$ դասարանում գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներ չկան: Դասարանում կան 5 հարվածային աշակերտներ.

1.Խաչատրյան Անի Միսակի

2.Հովհաննիսյան Միլենա Հայկի

3.Ղազարյան Արման Շահենի

4.Մարգարյան Տաթևիկ Գարիկի

5.Սարգսյան Անուշ Արայի

10^բ դասարանի աշակերտների առաջադիմությունը 100% է,իսկ որակական ցուցանիշը՝ 26.3%:Դասարանի բացակայության թիվը 327 ժամ է:Դասղեկը նշեց,որ աշակերտները լավ վիճակում են պահպանել դասասենյակի գույքը,խնամքով են պահել դասագրքերը:Աշակերտները տարվա ընթացքում դպրոց են հաճախել պայուսակներով,օրագրերով և դպրոցական համազգեստով:

Որոշեցին.

10^բ դասարանի սովորողների տարեկան առաջադիմությունը համարել բավարար և նոր ուսումնական տարում խթանել նրանց հետաքրքրասիրությունները և նպաստել նրանց առաջադիմության բարձրացմանը:

3.Լսեցին.

Դասղեկ Շ. Հարությունյանը նշեց,որ սովորողների դաստիարակության գործում մեծ դեր ունեն էքսկուրսիաները և խորհորեց ծնողներին ,որ ապահովեն աշակերտների ակտիվ մասնակցությունը դասարանում կազմակերպվող էքսկուրսիաներին:Ծնող Ավագյան Աննան առաջարկեց էքսկուրսիա կազմակերպել Հայաստանի պատմական վայրերից որևէ մեկը:Հաշվի առնելով այն կարևոր փաստը,որ նշվում է Հայաստանի առաջին հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյա հոբելյանները՝ դասղեկը նշեց,որ կարելի է ընտրել դեպի Սարդարապատի հուշահամալիր ուղղությունը և ծնողներին խորհորեց իրենց ակտիվ մասնակցությունը ունենալ էքսկուրսիայի կազմակերպմանը:Ծնող Պետրոսյան Թեհմինեն նշեց,որ էքսկուրսիաները ավելի են նպաստում աշակերտների մտերմիկ հարաբերություններին և ավելի են համախմբում նրանց:Դասղեկ Շ.Հարությունյանը խորհորեց ընտրել առավել ապահով փոխադրամիջոց և անփորձանք իրականացնել նախատեսված էքսկուրսիան:

Որոշեցին.

Ծնողները որոշեցին էքսկուրսիայի կազմակերպման համար հավաքել որոշակի գումար ծնողկոմիտեի նախագահ Թեհմինե Պետրոսյանի մոտ ,լուծել փոխադրամիջոցի հետ կապված հարցերը և իրականացնել էքսկուրսիան:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Թ. Պետրոսյան /

Քարտուղար՝ /Ան. Ավագյան /